ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2024 թվականի մարտի 5-ի, ժամը 14:00-ի նիստի
N 7 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **«Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից ներքին և արտաքին շահառուներին 2024 թ. առաջարկված հետազոտական ուղղությունների և նրանց կողմից ամրագրված հետազոտական թեմաների ցանկը հաստատելու մասին հարցը:**

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Թ.Մ.Մկրտչյան**:

Զեկուցողը նշեց. ավանդույթի համաձայն տարեսկզբին պետական կառավարման և տեղական ինքնակառավարման բոլոր մարմիններին ուղարկվել են առաջարկներ՝ ներկայացնելու իրենց հետաքրքրող թեմաների շուրջ հետազոտություններ: Այս պահին առաջարկություններ (պատվերներ) են ներկայացրել 4 նախարարություններ: Ներքին շահառուների կողմից առաջարկվել են 2 հետազոտական ուղղություններ, որոնք վերաբերում են Իրանի Իսլամական Հանրապետության և Հնդկաստանի Հանրապետության տնտեսությունների ուսումնասիրությանը: Թեմաներն առաջարկվել են «Ամբերդ» հետազոտական կենտրոնի նախաձեռնությամբ, առանց վարձատրության: Հետազոտությունները կիրապարակվեն կոլեկտիվ մենագրությունների տեսքով: Հետազոտական թեմաները քննարկվել և հաստատվել են գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի նիստում: Առաջարկվեց հաստատել 6 թեմա, որից 4-ը՝ պետական կառավարման մարմինների առաջարկություններով (պատվերով), 2-ը՝ ներքին շահառուների կողմից առաջարկվող:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Դոցենտ Ա.Վ.Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի նիստի որոշումը՝ **հաստատել** «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից ներքին և արտաքին շահառուներին 2024 թ. առաջարկված հետազոտական ուղղությունների և նրանց կողմից ամրագրված հետազոտական թեմաների ցանկը:

Ցանկ
«Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից ներքին և արտաքին շահառուներին 2024 թ. առաջարկված հետազոտական ուղղությունների և նրանց կողմից ամրագրված հետազոտական թեմաների

№	Պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինը	«Ամբերդ» հետազոտական կենտրոնի առաջարկած հետազոտական ուղղությունները	Պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմնի առաջարկած թեման
1.	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	1. Պետական կառավարում և տեղական ինքնակառավարում 2. Տարածական զարգացում 3. Համայնքների խոշորացում 4. Տարածքային համաչափ զարգացում	ՀՀ մարզերի ներդրումային գրավչության բարձրացման ուղիները
2.	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	1. Տնտեսության ներառական զարգացում 2. Մակրոտնտեսական վերլուծություն, մոդելավորում և կանխատեսում 3. Կարգավորում և մրցակցություն 4. Ագրարային քաղաքականություն 5. Մրցունակություն, միջազգայնացում և արտաքին առևտուր 6. ՀՀ տնտեսական քաղաքականությունը ԵԱՏՄ անդամակցության համատեքստում 7. Տնտեսական անվտանգություն	Աշխատուժի պահանջարկի բացահայտման և կանխատեսման մոդելներն ու մեխանիզմները՝ ըստ կրթական մակարդակների և վարչատարածքային բաժանման
3.	ՀՀ առողջապահության նախարարություն	Առողջապահության կառավարում	Քաղցր ըմպելիքների հարկման միջազգային փորձն ու բարելավման հիմքերը ՀՀ-ում

4.	ՀՀ ֆինանսների նախարարություն	1. Տնտեսության ներառական զարգացում 2. Մակրոտնտեսական վերլուծություն, մոդելավորում և կանխատեսում 3. Կարգավորում և մրցակցություն 4. Ագրարային քաղաքականություն 5. Մրցունակություն, միջազգայնացում և արտաքին առևտուր 6. ՀՀ տնտեսական քաղաքականությունը ԵԱՏՄ անդամակցության համատեքստում 7. Տնտեսական անվտանգություն	Հարկաբյուջետային քաղաքականության ներառականության ապահովման հիմնախնդիրները ՀՀ-ում
5.	Կոլեկտիվ մենագրություն		Իրան. պետություն, տնտեսություն, Հայաստանի հետ հարաբերությունների հեռանկարներ
6.	Կոլեկտիվ մենագրություն		Հնդկաստան. պետություն, տնտեսություն, Հայաստանի հետ հարաբերությունների հեռանկարներ

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 51, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նիստը նախագահող՝
ռեկտորի պարտականությունները կատարող,
ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր **Ա. Վ. Գրիգորյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2024 թ. մարտի 5
Երևան